



ՀԱՆԴԷՍ ՄՏԱԾՄԱՆ ԵՒ ԱՐՈՒԻԵՍԻ

Գ. ՏԱՐԻ, ԹԻՒ 1-2

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ՄԱՅԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 1931



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Fonds A.R.A.M

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հ ո Վ Ի Դ Մ Մ

Հ ո Վ Ի Դ Մ Մ Կ Ի Կ

Հոգ. Այմալիս (Մատ. Ազ. Երջուս. Նալալեմ)

Խաչատրյան Գրոթի-Է

1908

Հունիս 24:

Ստալ Կոլլեկտիվ

Ծնողներս: Ուսմանս ընթացքը:
Սուրբ Էջմիածնի միաբան:
Երգիչ եւ ուսուցիչ Մայր Աթոռում:
Համերգներս եւ դասախօսութիւններս:
Գրուածքներս:

Տիա քաղաքում: Երբորդ օրն ինձ մկրտել են
եւ անունս դրել Սողոմոն:

Հայրս Գէորդ Սողոմոնեանը (1) Բիւթա-

Ծնուել եմ 1869 թուին, Սեպտեմբերի
26ին, Փոքր-Ասիայի Կուստնա կամ Բիւթա-

(1) Սողոմոնեաններն ու Բիւթահայի Հայ
հին ընտանիքները հայկական շոք ցեղիցն են
եւ գաղթել են ժէ. դարու վերջում Գողթն
գաւառի ջղնայ գիւղից:

տեցի դպրոցական և լսարանական բաժին ըկար ու ձերմակ մուրուսի վեկայով լեզնում 1892—93 ուսումնական տարեշրջանին:

1896 թուին. հայ յայտնի բարեգործ Աղեքսանդր Մանթաշեանի օժանդակութեամբ գնացի Բերլին երաժշտական ուսումն կատարելագործելու: Դիմեցի աշխարհահռչակ ջութակահար Յովսէփ Յովակիմին, որ Բերլինի արքունի երաժշտանոցի տեսուչն էր: Խորհուրդ տուաւ մտնել Ռիխարդ Շմիտթի մասնաւոր երաժշտանոցը: Ուսուցչապետ և արքունի երաժշտագէտ տեսուչ Ռիխարդ Շմիտթը յանձն առաւ ինձ հետ պարապել ասանձնապէս:

Թէև ծանօթ էր ինձ դաշնակի ուսումը մինչև և կեղծ յաջորդութիւնները, բայց սկզբիցն սկսեցինք, որ հիմնաւոր լինի: Շմիտթի մօտ մնացի ուղիղ երեք տարի՝ 1896 թուի Յունիսից մինչև 1899 թուի Յունիսը: Աւարտեցի տեսական և մանաւանդ գործնական երաժշտութեան ամբողջ դասընթացը:

Միաժամանակ իսկական ուսանող գրուեցայ Բերլինի արքունի ձերիարիխ-Վիլհելմ Համալսարանի փիլիսոփայական բաժնում և լրացրի երաժշտութեան փիլիսոփայական պատմական դասընթացը: Ուսուցչապետներս էին F. Bellermann, O. Fleischer և G. Friedländer:

1899 թուին, Սեպտեմբերին վերադարձայ Ս. Էջմիածին:

Դեռ Գէորգեան ձեմարանի Զ. դասատան աշակերտ էի, երբ Մակար Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրով մտայ Ս. Էջմիածնայ միաբանութեան շարքը: 1890 թուին, Յունիսի Տին ձեռնադրուեցայ աւագ սարկաւազ: 1893 թուին, Սեպտեմբերի 11ին, Մկրտիչ Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրով ձեռնադրուեցայ արեղայ: 1895 թուին, Փետրուարի 26ին ձեռնադրուեցայ վարդապետ: Արաստանմանում ևս վարդապետ—ուսանող էի:

ձեմարան մտած օրից երգիչ և Մայր Աթոռի աչքի ընկնող ձայնեղ մանուկներից մէկն էի: Երբ Գէորգ Դ. Կաթողիկոսն իջնում էր Վեհարանից Մայր Տաճար, ևս ևս լմ մի ձայնեղ ընկերս կանգնում էինք նորա Աթոռի մօտ և այնպէս երգում միայնակները: Մեր երգելու ժամանակ ձերդուի Հայրապետի արցունքները զլորում էին և թաւալուելով եր-

էին փիլոնի ծալքերի մէջ:

Մակար Ա.ի օրով արդէն գլխաւոր դասապետ էի Մայր Աթոռում Դ. դասարանիցն սկսած: Մկրտիչ Ա.ի օրով 1893ի Սեպտեմբերի սկզբին նշանակուեցի ձեմարանի երաժշտութեան ուսուցիչ: Դաս էի տալիս հայ եկեղեցական երաժշտութիւնը հայ նորագոյն և եւրոպական ձայնանիշերով մինչև արտասահման գնալու: Երաժշտանոցն ու Համալսարանն աւարտելուցս յետոյ, 1899ի Սեպտեմբերին վերսկսեցի ձեմարանի դասերս. նշանակուեցայ Մայր-Աթոռի երաժշտապետ և վարում եմ Մայր Տաճարի բազմաձայն խումբը:

Առաջէն համերգը միացած էր Բերլինի Բ. դասախօսութեան հետ: Եւրոպայում մեծ համերգս տեղի ունեցաւ Փարիզում, «Փարիզի Հայկական Միութեան» ձեռնբեկութեամբ, 1906 Դեկտեմբեր 1ին: Այս համերգով նպատակ ունէի ծանօթացնել ձերանսայի երաժիշտ աշխարհին հայ ժողովրդի եկեղեցական և ժողովրդական ստեղծագործութիւններին: Այս համերգի մասին խօսեցին զբեթէ բոլոր երաժշտական հրատարակութիւնները. իսկ մանրամասնաբար Le Mercure Musical, 2e année, Nos. 23—24, 15 Décembre, pp. 422—424: Փարիզի համերգից յետոյ հրաւեր ստացայ Զուիցերիայի հայ ուսանողութիւններից համերգներ տալու համար հետեւեալ քաղաքներում՝ Յիւրիխ, Լօզան և ժընև: Կովկասում համերգներ եմ տուել Ս. Էջմիածին, Երևան, Տփղիս և Բաղու:

Անդրանիկ դասախօսութիւնն արել եմ «Հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտութեան» մասին՝ աւարտելուցս անմիջապէս յետոյ Բերլինի «Միջազգային երաժշտական Ընկերութեան» համար 1899 թուին, Մայիսի 10ին: Այս Ընկերութեան հիմնադիր ժողովի անդամներից մէկն էլ ես էի: Նոյն դասախօսութիւնն Ընկերութեան խնդիրքով երկրորդեցի 1899 Յունիսի 14ին, աւելի բազմամարդ երաժիշտ հասարակութեան առաջ նոյն քաղաքում՝ Շարվէնքայի երաժշտանոցի սրահում:

Այս դասախօսութեան մասին զրուեցան թերթերի մէջ հիացմունքով և «Միջազգային երաժշտական Ընկերութեան» ամսագրի մէջ [Zeitschrift der Internationalen Musik-

- Gesellschaft* այսպիսով
1. *Zu* այսպիսիս թղթ
 2. *Zu* հայեր. թղթ
 3. *Öguz* թղթ. ցուցաբերող (թղթ)
 4. *Musik* թղթ
 5. *Zweizehne* այսպիսի սուրբագրություն
 6. *Minutenblätter* հայերացի
 7. *Minutenblätter* այսպիսիս
 8. *Journal* թղթ
 9. *Journal* թղթ
 10. *Journal* թղթ (թղթ)

Gesellschaft, Jahrgang I. Heft 1 bis 2, October—November, 1899, Zeite 46—47/:

Երրորդ դասախօսութեան հրատարակչական, նոյն նիւթի մասին, Փարիզի համերգից յետոյ, École des Hautes Étudesի վարչութիւնից, եւ կարգացի մի փոքրիկ համերգ կցելով, 1907 Յունուարի 13ին:

Միւս դասախօսութիւնները նոյն նիւթի մասին արել եմ Սուրբ Էջմիածնայ Գէորգեան ձեռնարանում, Իգտիր գիւղում, Տփլիսում, Բագու, Փարիզ, Բերն, Լոզան, ժընև, Վենետիկ քաղաքներում հայերէն լեզուով հայ հասարակութեան համար:

Իմ աշխատութիւններս են՝

Ա. Տպուած

ա. Զօդուածներ

1. Հայոց եկեղեցական եղանակները. Արարատ.

2. Նիւթեր ժիժ, դարու Հայոց երաժշտութեան պատմութեան, Արարատ:

3. Քննադատական յօդուածներ. Արարատ:

4. Das Interpunctionssystem der Armenier (Sammelbände der Internationalen

Musik- Gesellschaft, Jahrgang I, Heft 1, October-November, 18.9, Zeite 54—64:

5. Armeniens Volfstümliche Reizen-tänze (Zeitschrif der Armenischen Philologie.

6. La Musique rustique arménienne- (Mercure Musical et Bulletin français de la Société Internationale de Musique (section de Paris) IIIe Année, 15 Mai, 1907, pp. 472—490):

Բ. Երգարաններ

1. Շար Ահնայ ժողովրդական երգերի (25 հատ), 1895, Ս. Էջմիածին, (հայ ձայնանիշերով):

2. Հաղար ու մի խաղ, Ա. Յիսնեակ, 1904:

3. " " " " Բ. " " 1905:

Ծանօթ.— «Հաղար ու մի խաղ» երբ Պ. Մ. Արեղեանի հետ) (1):

4. Mélodies Kurdes (13 հատ). Imprimerie de P. Jerrgensen de Moscou, 1905 ? (2):

(1) Այս ծանօթութիւնը կոմիտասի ձեռագրին մէջ է:

(2) Հարցականը կոմիտաս ինքն իսկ դրած է:

6.— «Հայ Քնար», հաւաքածու զեղջուկ
երգերի. La Lyre Arménienne, Recueil de
chansons rustiques, Paris, Imp. C. G. Rö-
der, Paris.

6.— Հատուկ երգեր զանազան թերթերում:

Բ. Անտիպ աշխատութիւններս՝

1. Հայ ժողովրդական երգեր.

2. Հայ հոգևոր երգեր.

3. Օտար երգեր զանազան լեզուներով
(ինքնուրոյն):

4. Տաճիկ երգեր:

5. Չանազան պարեր նուագարանների հա-
մար.

6. Ուսումնասիրութիւն հայ ժողովրդական
երաժշտութեան.

7. Ուսումնասիրութիւն հայ եկեղեցական
երաժշտութեան.

8. Սաղարանութիւն.

9. Չանազան երաժշտական դասազբքեր.

10. Թարգմանութիւններ (երաժշտութեան
վերաբերեալ) (1):

(1) Այս թանկագին ձեռագիրը ուր կոմի-
տաս վարդապետ իր մինչեւ 1908 ունեցած
կեանքի ու գործունէութեան հակիրճ պատ-
կեր մը տուած է, Պ. Լիպարիտ հազարեանն է
որ ինծի ազնուօրէն նուիրեց երկու տարի ա-
ռաջ: Չեմ գիտեր ի՞նչ առիթով, կամ որո՞ւ
ինդրանքով, զայն գրած է վարդապետը, որ
իր կենսագրութիւնը շարաբերելու շատ քիչ
տրամադրութիւն ունեցող մարդ էր: Յայտնի է
գրէն իսկ, առաջին էջերուն մէջ մաքուր,
հանդարտ, կոկիկ, ու հետագայ էջերու մեծա-
գոյն մասին մէջ՝ հապճեպ, սեւագրական,

չղային— որ նախ ճիգ մ՞ըրած է քիչ շատ
մանրամասնութեամբ պատմել իր կեանքն ու
գործը, բայց յետոյ՝ տրուած խոստում մը
յարգելու համար միայն՝ իր բազմադիմի գոր-
ծունէութեան մէկ չոր ուրուագիծը աճապա-
րանքով յանձնած է թղթին: Կարելոր է հոն
մանաւանդ՝ մինչեւ 1908 իր արդէն իսկ պատ-
րաստուած (մասամբ ալ հաւանօրէն կիսա-
ւարտ) անտիպ գործերու ցուցակը, զոր այդ
գրութեան վերջը կը գտնենք:

Ա. Զ.